ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1211-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 27 շենքի 18 բնակարանի բնակիչ Նունե Գրիգորյանի 2026 թվականի հուլիսի 20-ի N 5397 դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի գույքահարկ վճարված գումարից 27790 (քսանյոթ հազար յոթ հարյուր իննսուն) դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 27 շենքի 18 բնակարանի բնակիչ Նունե Գրիգորյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նունե Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1212-Ա

ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՆՁՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N 1 հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 9-ի N 175-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես Հրազդան համայնքի սեփականություն փոխանցված Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Քաղսի բնակավայրում գտնվող 0,192 հա մակերեսով (ծածկագիրը՝ 07-063-0364-0062), ինչպես նաև նույն բնակավայրում գտնվող 0,17054 հա մակերեսով (ծածկագիրը՝ 07-063-0364-0026) հողամասերը ճանաչել քաղաքացու սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1213-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12 կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 4-րդ ենթակետը և իրավաբանական անձանց հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել արտաքին գովազդի տեղադրման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 23 -ի
N 1213-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Արտաքին գովազդի մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի տեսակը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	Ա/Ձ Խաչիկ Հակոբյան	Լեռնանիստ բնակ. 9/11	Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 48	2 քառակուսի մետր գովազդային վահանակ «Շիլա Ռեստորան»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 3000 դրամ
2	Ա/Ձ Նորիկ Ավագյան	Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 6	Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 6	2 քառակուսի մետր գովազդային վահանակ «Շաուրմա»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 3000 դրամ
3	Ա/Ձ Ժենիկ Սեդրակյան	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 84/6	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս Զ. Անդրանիկի 118	1 քառակուսի մետր գովազդային վահանակ «Վի էլ վի»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 1500դրամ
4	Ա/Ձ Ժենիկ Սեդրակյան	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 84/6	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Զ. Անդրանիկի 43	3քառակուսի մետր գովազդային վահանակ «Վի էլ վի»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 4500դրամ
5	«Դավս» ՍՊԸ	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Զ. Անդրանիկի 8	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Զ. Անդրանիկի 8	5 քառակուսի մետր գովազդային վահանակ «Գաաբալոններ»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 7500դրամ
6	«Դավս» ՍՊԸ	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Զ. Անդրանիկի 8	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Զ. Անդրանիկի 8	4 քառակուսի մետր գովազդային վահանակ «Գազաբալոններ»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս ամսվա համար՝ 6000դրամ
7	«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	Ք. Երևան Շենգավիթ	Ք. Հրազդան, Հարավային թ-ս, Շահումյան փողոց 11/61	13.6 քառակուսի մետր գովազդային վահանակ «Դոբրոցեն»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար՝ 61200դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1214-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 11-րդ և 12-րդ կետերը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներին տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ.հուլիսի 23 -ի
N 1214-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Հասմիկ Մանուկյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 71/20	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 71/20	90 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 18000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 18000
2	Ա/Ձ Հասմիկ Մանուկյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 71/20	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 71/20	90 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 18000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 18000
3	Ա/Ձ Մայիս Սարգսյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 48/29	ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 105/1	44 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 11000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
4	Ա/Ձ Մայիս Սարգսյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 48/29	ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 105/1	44 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 11000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
5	Ա/Ձ Մանուշակ Ապոյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 42/1	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 42/1	47 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 11000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
6	Ա/Ձ Մանուշակ Ապոյան	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 42/1	ք. Հրազդան Կենտրոն թ-ս 42/1	47 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 11000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
7	«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատյան82	ք. Հրազդան Հարավային թ-ս, Շահումյան փողոց 11/61	750 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 100000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 100000
8	«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատյան82	ք. Հրազդան Հարավային թ-ս, Շահումյան փողոց 11/61	750 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 80000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 80000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1215-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 195-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետը և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորման միջոցով առևտուր իրականացնելու նպատակով սարքավորման տեղադրման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 23 -ի
N 1215-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեսակը՝	Տեղական վճարի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Մայիս Սարգսյան	Ք. Հրազդան,Կենտրոն թ-ս, 105/1 հարակից	Ք. Հրազդան,Կենտրոն թ-ս, 105/1 հարակից	շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորում	ինքնասպասարկվող սուրճի սարքավորման տեղադրում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 5000 դրամ	2026 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար 15000 դրամ
2	Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյան	Ք. Հրազդան,Կենտրոն թ-ս, Տիգրան Մեծի 11	Ք. Հրազդան,Կենտրոն թ-ս, Տիգրան Մեծի 11	շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորում	ինքնասպասարկվող սուրճի սարքավորման տեղադրում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 5000 դրամ	2026 թվականի հուլիս ամսվա համար 5000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հուլիսի 2026 թվականի N 1216-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 240-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 240-Ն որոշման հավելվածում կատարել վերաբաշխումները՝

Հրազդան համայնքի 2026 թվականի բյուջեի ծախսային մասում ՝ 8 բաժնի 1 խմբի 1 դասի 52 «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագրի նախահաշվում 4251 «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածում «24000.0» թիվը փոխարինել «21000.0» թվով, 4727 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածում «1500» թիվը փոխարինել «4500.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2026 թվականի N 1217-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 147.6քմ մակերեսով 07-001-0461-0001-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի պողոտա, 42/3 (ծածկագիր՝ 070117PNEHSW):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2026 թվականի N 1218-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 630.3քմ մակերեսով 07-001-0469-0005-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Երկաթգծի կայարանամերձ տարածք, 9 (ծածկագիր՝ 07011ZAKKCCL):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2026 թվականի N 1219-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 365.0քմ մակերեսով 07-001-0518-0001-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց, 2/4 (ծածկագիր՝ 07011E9LUGMY):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1220-Ա

ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Դավիթ Մարտիրոսյանի 2026 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 6 տան բնակիչ Դավիթ Պատվականի Մարտիրոսյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2026 թվականի հունիսի 19-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական՝ գրանցված գրանցամատյանում թիվ 1964, ժառանգական գործ՝ N 80) Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 3-րդ թաղամաս, թիվ 6 հասցեում գտնվող գույքին (կադաստրային համար՝ 07.063.049.008) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, 6-րդ նրբանցք, 6 (ծածկագիր՝ 07052PZ84WNB):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1221-Ա

ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Մխիթար Միրզոյանի 2026 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս թիվ 618 տան բնակիչ Մխիթար Խաչիկի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112023-07-0080) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի Շահումյան փողոց 3 հասցեում գտնվող գույքի 0.01830հա մակերեսով առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց, 5 (ծածկագիր՝ 07011HYGXPJK), իսկ 0.23661հա մակերեսով առանձնացվող հատված 2-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց, 3/1 (ծածկագիր՝ 070115TP6XLV):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մխիթար Միրզոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1222-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով՝ Զոյա Սարգսյանի 2026 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Զոյա Երվանդի Սարգսյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2026 թվականի հուլիսի 2-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ N 3403, ժառանգական գործ՝ N 187) Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 1 (ծածկագիր՝ 07022TKZJMUJ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զոյա Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1223-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Վոլոդյա Ամիրշատյանի 2026 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Պ.Դուրյան փողոց 18 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Վոլոդյա Կաչավանի Ամիրշատյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1852882, տրված՝ 2004 թվականի նոյեմբերի 25-ին) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային 636-128 հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ա. Բաբաջանյան փողոց, 50 (ծածկագիր՝ 07011RK3XKY2):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վոլոդյա Ամիրշատյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:¬

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1224-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22022025-07-0009) Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 732 հասցեում գտնվող 3 հա մակերեսով հողամասի բաժանվող մասերին տրամադրել հասցեներ.

1) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 1-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 741 (ծածկագիր՝ 07011ND4AS2B),

2) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 2-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 740 (ծածկագիր՝ 07011HMMGBBP),

3) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 3-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 739 (ծածկագիր՝ 07011JXMVKJN),

4) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 4-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 738 (ծածկագիր՝ 07011DGAZQUC),

5) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 5-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 737 (ծածկագիր՝ 07011BBCYFTL),

6) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 6-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 736 (ծածկագիր՝ 07011VNRFXRF),

7) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 7-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 735 (ծածկագիր՝ 070114XYUU9G),

8) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 8-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան

համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 734 (ծածկագիր՝ 07011GCWPKFJ),

9) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 9-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 733 (ծածկագիր՝ 07011AARXQFM),

10) 0.3 հա մակերեսով առանձնացվող հատված 10-ին՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 732 (070116CL2V69):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի N 1225-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 89.9քմ մակերեսով 07-001-0674-0027-ից ծածկագրերով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Վ. Մամիկոնյան փողոց, 1-ին նրբանցք, 4/2 (ծածկագիր՝ 07011YYJUHWG):

2.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Վ. Մամիկոնյան փողոց, 1-ին նրբանցք, 4/2 հասցեում գտնվող 89.9քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1226-Ա

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ռուդիկ Հովհաննիսյանի 2026 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 264 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Ռուդիկ Գագիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05032026-07-0060) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 4 շենք 19 հասցեում գտնվող արվեստանոցի գործառնական նշանակությունը փոփոխել բնակարանի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուդիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1227-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Արշավել Գյուլբուդաղյանի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված Վահրամ Հակոբյան ԱՁ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023FR4U5X), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի մարտի 23-ի թիվ 42 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0514-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց, 343 (ծածկագիր՝ 07011QCZ7LQF):

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 204 շենքի թիվ 41 բնակարանի բնակիչ Արշավել Գյուլբուդաղյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց, 343 հասցեում գտնվող 56.2քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 28.1քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1228-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով «Արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2026PAM5MW) և Արտակ Մարգարյանի լիազորված անձ Հրանտ Մարտիրոսյանի 2026 թվականի մայիսի 6-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն, Իսրայելյան փողոցի 37 շենքի թիվ 130 բնակարանի բնակիչ Արտակ Հմայակի Մարգարյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Սոլակ գյուղի 10-րդ թաղամաս 72 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12082025-07-0179) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 360.5քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ օրինականացման վճարը սահմանել 436 000 (չորս հարյուր երեսունվեց հազար) դրամ, 5.3քմ արտաքին մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 6 500 (վեց հազար հինգ հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մարգարյանի լիազորված անձ Հրանտ Մարտիրոսյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1229-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԵՐԻ, ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով «Արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023WCJBKW), Մացակ Խաչատրյանի և Նարինե Ղարագյոզյանի 2025 թվականի հունվարի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 151/1 տան բնակիչներ Մացակ Ռազմիկի Խաչատրյանի և Նարինե Մերուժայի Ղարագյոզյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց թիվ 8-8/1 հասցեում գտնվող ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27022017-07-0020) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 34.37քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ օրինականացման վճարը սահմանել 116 000 (մեկ հարյուր տասնվեց հազար) դրամ, 21.20քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ օրինականացման վճարը սահմանել 71 000 (յոթանասունմեկ հազար) դրամ, 1.15քմ արտաքին մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 4 000 (չորս հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով

պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մացակ Խաչատրյանին և Նարինե Ղարագյոզյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1230-Ա

ԱՐՄԱՆ ԽԱՉԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթ մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Արման Խաչիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքում հաշվառված՝ BMW 525 I մակնիշի, 34FT118 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2018-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 412 662 (չորս հարյուր տասներկու հազար վեց հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 298 658 (երկու հարյուր իննսունութ հազար վեց հարյուր հիսունութ) դրամ ապառք, 114 004 (մեկ հարյուր տասնչորս հազար չորս) դրամ տույժ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արման Խաչիկի Մարգարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 14:30-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Արման Խաչիկի Մարգարյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի N 1231-Ա

ՄՀԵՐ ՄԵԺԼՈՒՄԻ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Մեր Մեժլումի Խաչատուրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքում հաշվառված՝ DODGE GRAND CARAVAN SXT 3.6 մակնիշի, 37VS351 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2024-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 424 168 (չորս հարյուր քսանչորս հազար մեկ հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 321 250 (երեք հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ ապառք, 102 918 (մեկ հարյուր երկու հազար ինը հարյուր տասնութ) դրամ տույժ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեր Մեժլումի Խաչատուրյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 14:40-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Մեր Մեժլումի Խաչատուրյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեր Խաչատուրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի N 1232-Ա

ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Կարեն Գևորգի Կարոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքում հաշվառված՝ MERCEDES-BENZ E 550 մակնիշի, 86XX550 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2019-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 1 339 583 (մեկ միլիոն երեք հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 999 126 (ինը հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր քսանվեց) դրամ ապառք, 340 457 (երեք հարյուր քառասուն հազար չորս հարյուր հիսունյոթ) դրամ տույժ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կարեն Գևորգի Կարոյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 14:50-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Կարեն Գևորգի Կարոյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Կարոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1233-Ա

ՆԱՐԵԿ ԺՈՐԱՅԻ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Նարեկ Ժորայի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքում հաշվառված՝ MERCEDES-BENZ S 320 մակնիշի, 35PQ103 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2018-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 804 940 (ութ հարյուր չորս հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 601 200 (վեց հարյուր մեկ հազար երկու հարյուր) դրամ ապառք, 203 740 (երկու հարյուր երեք հազար յոթ հարյուր քառասուն) դրամ տույժ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Նարեկ Ժորայի Խալաթյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 15:00-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Նարեկ Ժորայի Խալաթյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարեկ Խալաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի N 1234-Ա

ԱՐԵԳՆԱԶ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Արեգնազ Պատվականի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի, Հրազդան քաղաքում հաշվառված՝ JEEP GRAND CHEROKEE 3.6 մակնիշի, 37XU413 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2024-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 495 959 (չորս հարյուր իննսունհինգ հազար ինը հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 376 350 (երեք հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր հիսուն) դրամ ապառք, 119 609 (մեկ հարյուր տասնինը հազար վեց հարյուր ինը) դրամ տույժ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արեգնազ Պատվականի Գրիգորյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 15:10-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Արեգնազ Պատվականի Գրիգորյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արեգնազ Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 1235-Ա

ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի 2026 թվականի հուլիսի 24-ի զեկուցագիրը՝ Սամվել Անանիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրում գտնվող անշարժ գույքի գույքահարկի 2008-2025 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 240 056 (երկու հարյուր քառասուն հազար հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 155 981 (մեկ հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր ութսունմեկ) դրամ ապառք, 84 075 (ութսունչորս հազար յոթանասունհինգ) դրամ տույժ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սամվել Անանիկի Պետրոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի լսումների օրը նշանակել 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 15:20-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Սամվել Անանիկի Պետրոսյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկ Հայրապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ռոբերտ Թումոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1236-Ա

ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Կարեն Օհանյանի 2026 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 13 տան բնակիչ Կարեն Վանիկի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1494842, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 16-ին) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 13 հասցեում գտնվող գույքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ա. Մյասնիկյան փողոց, 13 հասցեով (ծածկագիր՝ 07011CYGRSGJ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Օհանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1237-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/33» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նվազագույն գին էր առաջարկել «Ս.Ա.ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ն: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի՝ «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/33» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի հուլիսի 02-ին «Ս.Ա.ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել պայմանագրի իր կողմից ստորագրված տարբերակը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները, որոնց մասին սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միաժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1,Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը		Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը		Իրավական հիմք	
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/33»	1	Դիզելային գեներատոր	10 400 000	«Ս.Ա.ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	08423192	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա հ. 73/2	15.07.2026	Հրազդանի Համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/33» ծածկագրով գնումների 8.15 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

28 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1238-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 80.0քմ մակերեսով 07-001-0461-0001-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի պողոտա, 50/5 (ծածկագիր՝ 07011RYWZNTZ):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1239-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԶՈՒԳԱՐԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Աշոտ Գրիգորյանի 2026 թվականի ապրիլի 15-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԹՐԵՔ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2026TKTHZS), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի հուլիսի 7-ի թիվ 78 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Քաղսի գյուղում գտնվող 07-063-0038-0027-ից ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 11-րդ փողոց 14/1 (ծածկագիր՝ 07052XDTC2JP):

2.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 11-րդ փողոցի թիվ 14 տան բնակիչ Աշոտ Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված Քաղսի գյուղի 11-րդ փողոց 14/1 հասցեում գտնվող 18.6քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության բնակելի տունը, 43.9քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունը և 1.7քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության զուգարանը ճանաչել օրինական:

3.Բնակելի տունը, օժանդակ շինությունը, զուգարանը և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 140.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 1240-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

